ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 132

06 ապրիլի 2022 թվական

ՇԵՆՔԻ ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՔԻ ՁԵՎԱՓՈԽՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով *որոշում եմ՝*

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Շիրազի փողոց 19 շենքի թիվ 2 բնակարանի սեփականատեր է հանդիսանում Գագիկ Վոլոդյայի Յայլոյանը, /սեփականության իրավունքի վկայական N1996349/ Հիմք ընդունելով քաղաքացու դիմումը, այժմ անհրաժեշտություն է առաջացել նշված բնակարանի խուլ պատում բացել լուսամուտ:

1.Արտաքին տեսքի ձևափոխման աշխատանքներ կատարելու ժամանակ շենքի կրողունակությունը չի խանգարվում և հիմք ընդունելով /2022 թվականի մարտի 15-ի անհատ ձեռներեց Սեդրակ Մուրադյանի /քաղաքաշինության նախարարություն, պետ լիցենզիա 16072/ և մոնոլիտ բազմաբնակարան շենքի խուլ պատում լուսամուտ բացելու նախագիծը ու փորձագիտական եզրակացությունը, ուստի թույլատրել քաղաքացուն խուլ պատի մեջ բացել լուսամուտ 1,20 x 1,50մ չափերի:

2.Պարտավորեցնել Գագիկ Վոլոդյայի Յայլոյանին <<Տեղական տուրքերի վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն համայնքային բյուջե մուծել 10000 /տաս հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Անի համայնքի ղեկավար՝ Ա.Գևորգյան

2022 թվականի ապրիլի 06
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 133

06 ապրիլի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՁՈՐԱԿԱՊ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐԱՅԻԿ ԱՎԵՏԻՔԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ,ԵՐՄՈՆՅԱ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ,ԱՐԾՎԻԿ ԱՐԱՅԻԿԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ, ԱՐՓԻՆԵ ԱՐԱՅԻԿԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ,ԱՐՄԱՆ ԱՐԱՅԻԿԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀԱՄԱՐԱԿԱԼԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետի, 50-րդ և 52-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Արայիկ Ավետիքի Հովսեփյանի դիմումը *որոշում եմ՝*

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Ձորակապ բնակավայրում գտնվող Արայիկ Ավետիքի Հովսեփյանին,Երմոնյա Հովհաննեսի Հարությունյանին,Արծվիկ Արայիկի Հովսեփյանին,Արփինե Արայիկի Հովսեփյանին,Արման Արայիկի Հովսեփյանին /կադաստրային ծածկագիր 08-073-017-037/ (սեփականության վկայական համար 1999689) պատկանող բնակելի տանը տրամադրել հետևյալ հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Անի համայնք, Ձորակապ բնակավայր, 4-րդ փողոց, թիվ 11 բնակելի տուն:

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Անի համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան

2022 թվականի ապրիլի 06
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 134

06 ապրիլի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 32 ՀԱՍՑԵԻ ՍԵՓԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՌՈՒԲԵՆ ԳԱԼԻԿԻ ԳԱԼՍՏՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Քննարկելով Ռուբեն Գալիկի Գալստյանի դիմումը (ծնված 05.02.1941 թվականին) Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Գործարանային փողոց թիվ 32 հասցեի իր սեփականության իրավունքով պատկանող հողամասում (կադաստրային ծածկագիր 08-003-0068-009, սեփականության իրավունքի վկայական 2066359) ինքնակամ կառուցված 48 քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակի վերաբերյալ, որը չի ընդգրկում Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 60-րդ հոդվածի դրույթները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Քաղաքացիական օրենսգրքի>> 188-րդ հոդվածի, 2003 թվականի ապրիլի 17 թիվ 470-Ն և Հայաստանի Հանրապետության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված <<ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման>> կարգի 13-րդ կետի Բ ենթակետի, հաշվի առնելով, որ կառույցը պահպանելը չի խանգարում այլ անձանց իրավունքները, կառույցը կառուցված չէ ինժեներատեխնիկական օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտի իրավունք և հաշվի առնելով Ռուբեն Գալիկի Գալստյանի դիմումը որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Գործարանային փողոց թիվ 32 հասցեի սեփական (կադաստրային ծածկագիր 08-003-0068-009) բնակելի կառուցապատման հողամասում Ռուբեն Գալիկի Գալստյանի կողմից ինքնակամ կառուցված 48 քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական:

Սահմանել որ սեփականատերը

2. Սույն որոշումն ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի բյուջեի 900495101447 հաշվեհամարինպետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված <<ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման>> կարգի 13-րդ կետի Բ ենթակետով ավտոտնակի համար վճարի չափը կազմում է՝

0,1028 x 48ք/մ x 10000 =49344 Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված գումարը չվճարելու դեպքում նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Անի համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան

2022 թվականի ապրիլի 06
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՀայաստանիՀանրապետության Շիրակիմարզի Անիհամայնք
ՀայաստանիՀանրապետությանՇիրակի մարզ, քաղաքՄարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 135

06 ապրիլի 2022 թվական

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 7-րդ կետի 1-ին ենթակետի «ա» և «բ» պարբերության, 8-րդ կետի, 12-րդ կետի 2-րդ ենթակետի և 20-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով, ***որոշում եմ***՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի կողմից «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի կարիքների համար ավտոլվացման ծառայության» ձեռքբերման նպատակով պատասխանատու ստորաբաժանում սահմանել հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ՝ Մարտիրոս Դարբինյան-Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի տեղակալ

Հանձնաժողովի անդամներ՝ Առաքել Հայրապետյան-Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի ծառայողական ավտոմեքենայի վարորդ

Կարեն Հովհաննիսյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի ծառայողական ավտոմեքենայի վարորդ

Յուրա Հայրապետյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Անի կոմունալ տնտեսություն» համայնքային բյուջետային հիմնարկի ավտոպարկի պատասխանատու-մեխանիկ:

2.Սույն որոշման 1-ին կետով նախատեսված գնումների կատարման նպատակով գնումների համակարգողի լիազորությունները վերապահել Կարեն Նալբանդյանին:

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Անի համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան

2022 թվականի ապրիլի 06
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 136

07 ապրիլի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԶԻ ՓՈՂՈՑ N 41 ՇԵՆՔԻ ԹԻՎ 2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քանի որ Հայաստանի ազգային արխիվի Մարալիկի տարածքային ներկայացուցչությանում Անիի շրջխորհրդի գործկոմի 1989-1992 թվականների, նիստերի արձանագրություններում Մարալիկ քաղաքի Շիրազի փողոցի թիվ 41 շենքի հողհատկացման որոշում չի հայտնաբերվել և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 64-րդ հոդվածի 8-րդ մասի 2-րդ և 64 հոդվածի 16-րդ ենթակետով, 118-րդ հոդվածի դրույթներով *որոշում եմ՝*

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի առաջին ատյանի դատարանի վճռի (քաղաքացիական գործ թիվ ՇԴ3/1903102/21) Անի համայնքի Մարալիկ քաղաքի Շիրազի փողոց N 41 շենքի թիվ 2 հասցեում գտնվող բնակարանը (կադաստրային ծածկագիր 08-003-0020-0028) ճանաչվել է Կառլոս Գուրգենի Քոչարյանի, Աննա Մարլենի Մարտիրոսյանի և Տաթևիկ Կառլոսի Քոչարյանի սեփականությունը, ուստի վերականգնման իրավունքով սպասարկման նպատակով բնակարանին հատկացնել 0,03023 հեկտար հողատարածք՝ պայմանով օտարման դեպքում վճարելով տվյալ պահին գործող հողի կադաստրայի արժեքի չափով Հայաստանի Հանրապետության դրամ:

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Անի համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան

2022 թվականի ապրիլի 07
քաղաք Մարալիկ